

3529

3K33
2-28

29.15(47)

0-94

ԱՏԱԼԻՆ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

ԱԳԵՐՆԵՐ—ԿՈՒՄԱՐԱՏ—1933

27 JUN 2005

3K33

Հ-28
մար.

Գրության բուհը յիրկըների, միացնել

20 NOV 2009

ԱՏՎԼԻՆ

38621

3K34

ԵԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

595



0.9ԵՐՆԵՐԸ—ԿՈՒՍՀՐԱՍ—1933

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

ԲԱԳՈՒ

ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենը խմբագրեց՝ Լ. Դանիելյան. Տեխ. խմբ. Կ. Թառլանյան

Հանձնված և արտադրության՝ 22-ին ապրիլի, ստորագրված
և տպագրության՝ 4-ին մայիսի, տպագրական թերթերի թիվը՝ 1
տպագրական նշանների թիվը՝ 38.800.

Baş M. M. Mynevkilligi № 2314. Sifariş № 679. Tigray 1000.

AZƏRNƏŞR MƏTBƏDİSİNDƏ BASILDB.

Vakı, B. -Morsqoj və Q.-Presnenski kycələrin tinində № 16/36.

Յերկրում վորոշ «հանգստացումից» հետո, Ոռուսաստանի լավ բերքից և կենտրոնական արդյունաբերական ույոնում աշխատանքների աշխուժանալուց հետո՝ նավթային արդյունաբերությունը վորոշ վերելքի շրջանն է մտել: Մասնակի գործադուլները յերկուղալի (ոխմով) լինելու շնորհիվ (քաղաքական դաժան ոեպրեսիաների և նավթարդյունաբերողների աճող կազմակերպվածության պատճառով) նավթահանության պակաս ստացումը, վոր գործադուլներով երպայմանափորված՝ իշել և ինչ վոր մի կես միլիոն փթի: Գործադուլների բացակայությունը և նավթահանման սահուն ընթացքը բարեհաջող պայմաններից մեկն և հանդիսացել՝ շատրվանային նավթի քանակի ավելացման համար: Իսկ նավթարդյունաբերության դրության մեջ ստեղծ-

ված (համեմատական) կայունությունը նրան վերադարձրել ե վերջին ժամանակներս կորցրած շուկան։ Այս տարի նավթահանության քանակությունը բարձրացել է 500 միլ. տիզի, —մի թիվ, վորին նավթահանությունը յերբեք չի հասել վերջին չորս տարիներից և վոչ մեկում (անցյալ տարի - 467 միլիոն տոնն): Շնորհիվ այս բանի, վոր կենտրոնական-արդյունաբերական ռայոնի կողմից ավելացել ե վառելանյութերի պահանջը և Հարավ-Սրբելյան, Ռյազան-Ուրալի, Մոսկա-Կազանի յերկաթուղիները քարածխից նավթի յեն անցել, այս տարի նավթի արտահանությունը զգալիորեն առաջ ե անցել անցյալ տարվանից։ Չնայած նավթարդյունաբերողների բարձրացըրած վայնասունին նավթի գները չեն ընկնում, այլ մնում են հին գները, վորովհետև տարեկան միջին գինը նույնն ե, ինչ վոր անցյալ տարի (21 կ.): Իսկ որհնյալ նավթահորերը հենց են ե, շատրվանում են, պարզելով նավթարդյունաբերողներին անձրեփ առատությամբ նավթ։

Մի խոսքով՝ նավթարդյունաբերողների «գործերը» դրստվում են։

Մինչդեռ տնտեսական ռեզըրվահաները վոչ միայն չեն թուլանում, այլ ընդհակառակը, ել ավելի յեն ուժեղանում։ Հետ են վերցվում «նագրադնոյն» ու բնակարան՝ վարձը։ Յերեք հերթի աշխատանքը (8 ժամյա բանվորական որ)

փոխարինվում ե յերկու հերթի աշխատանքի (12 ժամ. բան. որ), իսկ արտածամյա գործակարձային աշխատանքը սիստեմ ե գառնում։ Բժըշկական ոգնությունն ու դպրոցների համար արգող ծախսերը նվազագույնի յեն հասցվում (իսկ վոստիկանության համար նավթարդյունաբերողները տարեկան ծախսում են 600 հազար ռուբլուց ավելի): Ճաշարաններն ու ժողովրդական տներն արդեն հետ են խլված։ Հանքագործարանային հանձնաժողովներն ու պրոֆմիությունները միանգամայն անուշադրության են մատնելում։ Կիտակից ընկերներին վերջնահաշիվ տալը հին ձևով ե գնում։ Վերսկսվում են տուգանքներն ու ծեծը։

Ցարական իշխանության ծառաները — վոստիկանությունն ու ժանդարմերիան — ամբողջապես նավթային արքաներին են սպասարկում։ Բագվի Դավթային ռայոնները հեղեղված են լրտեսներով ու պրովակատորներով, նավթարդյունաբերողների հետ ամենաչին ընդհարման համար՝ բանվորների մասսայական աքսորում, Բագվի արտոնությունների փաստական «ազատությունների» լիակատար ավերում և ձերբակալություններ՝ ձերբակալությունների հետևից, այսպես ե — տեղեկան աղմբինիստրացիայի «սահմանադրական» աշխատանքի պատկերը։ Յեվ դա հասկանալի յեւ առաջինը, նա «ըստ իր եյության» չի կարող չխեղ-

գել ամեն մի, թեկուզ, ամենատարրական «ազատությունը», յերկրորդը, նա պարտավոր ե այդպիս վարչել և այն պատճառով, վոր նավթային արդյունաբերությունը, —վորը վորպես փթավճար և պետական հողամասերից արվող հատկացում, աքցիզ և փոխադրման տարիք՝ տարեկան 40 միլիոն ռուբլուց վոչ պակաս «յեկամուտ» ե տալիս գանձարանին, —«կարիք ունի» հանգստության, անընդհատ նավթահանման: Մենք ել չենք խոսում այն մասին, վոր նավթային սրդյունաբերության մեջ ամեն մի արգելք ռաշող կերպով ազդում ե կենտրոնական-արդյունաբերական ռայոնի վրա, իսկ դա ել իր հերթին՝ կառավարության «գործերն» ե խանգարում: Ճիշտ ե, կառավարությունը մոտիկ անցյալում անհրաժեշտ ե համարել նավթային ռայոններում վորոշ «ազատություն» թույլ տալ՝ բանվորների ու նավթարդյունաբերողների «խորհրդակցություն» սարքելով: Բայց դա անցյալում ե յեղել, յերբ հականեղափոխության շանսերը դեռ քիչ եյին պարզված, այն ժամանակ բանվորներին շոյելու քաղաքականությունն ամենածեռնտուր քաղաքականությունն եր: Այժմ դրությունն արդեն պարզվել ե, հականեղափոխությունը «վերջնականապես» հաստատվել ե, —և գաղանային ռեպրեսիաների քաղաքականությունը բռնել ե շոյանքների քաղաքականության տեղը, ջարդեր սարքող

Մարտինովը փոխարինել ե քաղցր յերգող ջունկովուն:

Մինչդեռ բանվորները վերջնականապես հիամթափում են մասնակի գործադուների նըպատակահարմար լինելուց, նրանք ավելի և ավելի վճռականորեն են խոսում ընդհանուր տնտեսական գործադուլի մասին: Այն փաստը, վոր նավթարդյունաբերողների «գործերն» ուղղվում են, իսկ մնշումներն այնուամենայինք աճում են, —վրդովում են մինչև հոգու խորքերը, լարում մարտականորեն և վորքան վճռականորեն են խլվում հին նվաճումները, նույնքան ավելի լրիվ ե հասունանում բանվորների գլխում ընդհանուր գործադուլի գաղափարները, նույնքան ավելի անհամբերությամբ են նրանք «սպասում» «գործադուլ հայտարարելուն»: Կազմակերպությունը հաշվի յե առել, թե նավթարդյունաբերության գործադուլի համար յեղած նպաստավոր դրությունը, և թե բանվորների գործադուլային արշամադրությունն ու վորոշել ե ընդհանուր գործադուլի նախապատրաստական աշխատանք ըսկըսել: Ներկայումս Բագվի Կոմիտեն մասսաների հարցումով և ամբողջ նավթային պրոետարիատը համախմբելու ընդհանուր պահանջների մշակմամբ ե զբաղված: Ամենայն հավանականությամբ՝ պահանջների մեջ կմտնեն—8 ժամյա բանվորական որ, աշխատավարձի բարձրացում,

արտաժամյա և գործավարձային աշխատանքների վերացում, բժշկական ոգնության ուժեղացում, բանվորական ավաններ և բնակարանների վարձ, ժողովրդական տներ ու դպրոցներ, հանձնաժողովների ու միությունների ճանաչում: Կազմակերպությունը ու նրա գործադիր որգան Բազվի կոմիտեն գտնում են, վոր չնայած հականեղափոխության ուժեղանալուն և նավթարդյունաբերողների աճող կազմակերպվածությանը, բանվորներին կհաջողվի իրենց գործն առաջ տանել, յեթե թշնամու ուժերին հակադրեն իրենց դասակարգային կազմակերպվածությունը՝ հանքագործարանային հանձնաժողովների ձևով, ընդարձակելով ու ամրապնդելով միությունները, համակերպ ամրապնդելով սոցիալ-դեմոկրատիայի շուրջը: Մումբիւլով սոցիալ-դեմոկրատիայի շուրջը՝ Մումբնտի ընտրությունը կախված ե բազմատեսակ պայմաններից, վոր նախապես հաշվի առնել դժվար ե: Առայժմ մի բան պարզ ե, վոր գործվար ե: Առայժմ մի բան պարզ ե, վոր գործադուն անխուսափելի յե, և պետք ե պատրաստվել գործադունին «առանց մի ըոպե կորցնելու»*):

ՀԱՆՔԱՅԻՆ ԻՆՖՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Նավթարդյունաբերության աշխատացումը միակ կարևոր յերեխութը չե Բազվի պրոետա-

*). Ընդհանուր գործադուն պատրաստելու մասին Բազվի կոմիտե են այժմ արդեն իսպում և մասսաներին ուղղած իր թուղթիներում:

րիատի կյանքում: Մյուս, վոչ պակաս կարեոր յեղելությունը հանդիսանում է մոտերս մեզնում սկսված «զեմստվոյական կամպանիան»: Մենք խոսում ենք Բազվի նավթային որգաններում հանքային ինքնավարության մասին: Մայրամասերի գեմստվոների մասին ներքին գործերի մինիստրության հայտնի «յենթադրություններից» և Կովկասում զեմստվոյական մացնելու գործնական միջոցների մասին՝ Կովկասյան փոխարքայի համապատասխան շրջաբերականից հետո՝ նավթարդյունաբերողներներն զբաղվել են հանքային ինքնավարության նախագծի մշակումով: Նախագծի հիմունքները, վոր անշուշտ կհաստատի նավթարդյունաբերողների հերթական (28-րդ) համագումարը, մոտավորապես այսպես են: Նավթահանքային ուայենը (Բալախանի, Ռամանի, Սաբունչի, Սուրբախանի, Բիբի-Հեյբաթ, առանձնացվում ե քաղաքից ու գավառից ու դառնում առանձին մի զեմստվոյական միավոր, վոր կոչվում է հանքային ինքնավարություն: Հանքային ինքնավարության ֆունկցիաներն են. — Ջրի մատակարարում, լուսավորություն, ճանապարհների անցկացում, տրամվայ, բժշկական ոգնություն, ժողովրդական տներ, դպրոցներ, սպանդանոցների և բաղնիսների, բանվորական ավանների կառուցում և այլն: Ինքը՝ ինքնավարությունն ընդհանուր առմամբ կազմակերպվում ե 1890 թվի

Էռունիսի 12-ի «կանոնադրության» տիպով, այն տարբերությամբ, վոր «կանոնադրության» համաձայն՝ զեմստվոյի անդամների քանակության կեսն անպատճառ ապահովում ե ազնվականության համար, իսկ այստեղ, ազնվականություն չինելու պատճառով (հանքային ուայոնը գավառից զատելով՝ նավթարդյունաբերողներն իրանց անվտանգ են դարձել հողատերերի գերակշռությունից, իրենց սեփական գերակշռությունն ստեղծելով) նույն քանակությունն ապահովում ե մինչև իսկ վոչ բոլոր, այլ միայն 23 խոշոր նավթարդյունաբերողների համար. ինք նավարության 46 տեղերից 6 ը տրվում ե տեսչությունների ու հասարակական հիմնարկությունների ներկայացուցիչներին, 4 տեղ 100 հազարանոց բանվորական բնակչությանը, 18 տեղ՝ բոլոր հարկերի յերկու յերրորդ մասը վճարողներին, արտիսքն՝ 23 խոշոր նավթարդյունաբերողներին (ամբողջ ըյու ջեն մոտ 600 հազար ռուբլի ե), 9 տեղ՝ հարկերի մեկ վեցերորդը վճարողներին, այսինքն՝ 140-150 միջակ նավթարդյունաբերողներին, վորոնք վասսալական կախումն ունին խոշորներից, մնացած իննը տեղը՝ մանր տունտրական արդյունաբերական բուրժուազիային (մոտ 1400 հոգի):

Ինչպես տեսնում եք, մեր առաջ են, մի կողմէ, արտոնյալ կապիտալիստները, մյուս կող-

միջ՝ զուտ արդյունաբերական զեմստվո, վոր իրենից պիտի ներկայացնի աշխատանքի և կապիտալի միջև սուր ընդհարումների ասպարեզ։ Հատկապես այդպիսի զեմստվո կազմելով՝ նավթարդյունաբերողները ցանկանում են, նախ կուլտուր-տնտեսական ֆունկցիաների մեծ մասըն իրենց «համագումարից» հանքային ինքնավարության վրա գցել, «համագումարը» դարձնելով մի զուտ սինդիկատ. յերկրորդը՝ հանքային բանվորական բնակչության կարիքների ծախսումներին մասնակից դարձնել և մնացած բուրժուազիային (ոժանդակ ձեռնարկությունների տերերին, հորափորման կապալառուներին և այլն): Իսկ ինչ վերաբերում ե «Յ-րդ Պետական Դումայի կանոնադրության համաձայն» բանվորներին տրվող 4 ձայնին (լիազորներ բանվորական կուրիֆայից, իսկ հետո՝ 4 ընտրող), ապա դա վոչ միայն զոհաբերություն չի նավթարդյունաբերողների կողմից, այլ և շատ ձեռնտու յե. — 4 բանվորական ձայն ինքնավարության դեկորացիայի համար, — դա այնպես «լիբերալ ե» և... եժանագին, վոր նավթային արքաներն ազատուեն կարող են համաձայնել դրան:

Մյուս կողմից, վոչ մի կասկած չկա, վոր այն չափով, ինչ չափով հանքային ինքնավարությունը ի մի կզումարի նավթարդյունաբերական և այսպես կոչված «ոժանդակ» բուրժուա-

զիան, այն չափով ել նա կմիացնի մինչև այժմ իրարից բաժան նավթարդյունաբերական բանվորներին ու ոժանդակ ձեռնարկությունների բանվորներին՝ նրանց հնարավորություն տալով իրանց ընդհանուր պահանջները ցուցադրելու իրանց չորս ներկայացուցիչների միջոցով:

Այդ բոլորը հաշվի առնելով՝ Բագվի կոմիտեն հանքային ինքնավարության մասին հանած իռ բանաձեռով՝ վորոշել և ոգտագործել ծրագրվող ինքնավարությունը՝ Երան մասնակցելու իմաստով, բանվորների ընդհանուր-տնտեսական կարիքների ազիտացիայի և նրանց ավելի ուժեղ կազմակերպման նպատակով:

Ապա ընտրական սիստեմի շրջանակներն ընդլայնելու նպատակով և յելնելով այն բանից, վոր հանքային ինքնավարությունն ընդհանրապես բանվորներին հուզող միենույն հարցերով կզբաղվի, վորոնցով զբաղվել են մինչև այժմ հրավիրված խորհրդակցությունները, — իսկ այդ խորհրդակցություններում բանվորներին տրվում եր նավթարդյունաբերողներին հավասար ձայներ—կազմակերպությունն իր բանաձեռով պահանջում ե ունենալ ինքնավարության մեջ բանվորների համար հավասար քանակությամբ ձայն՝ շեշտելով, վոր ինքնավարության ներսում պայքարը կարող ե ուժ ունենալ միայն այն չափով, ինչ չափով նա պաշտպանվում ե ինքնավարությունից

դուրս մղվող պայքարով և ծառայում վերջինի շահերին:

Բացի գրանից, նկատի առնելով նահանգական խորհրդակցության՝ բանվորների համար հանած աննպաստ վորոշումը՝ նավթահանքային ինքնավարության ռայոնից Բալախանի, Սաբունչի, Ռամանի գյուղերի անջատման մասին, — վորոնք իրց բանվորական ավաններ են — կազմակերպությունը պահանջում ե այդ գյուղերը մտցնել հանքային ինքնավարության ռայոնի մեջ:

Վերջապես, ընդհանուր բանաձեռում մատնանշելով ընդհանուր, հավասար, ուղղակի ու գաղտնի քվեալկությունը, վորպես տեղական ինքնավարությունների ազատ զարգացման և գոյություն ունեցող գասակարգային հակասությունների ազատ արտահայտման անհրաժեշտ պայման, — Բագվի կոմիտեն շեշտում ե ցարական իշխանության տապալման անհրաժեշտությունը և համաժողովրդական հիմնադիր ժողով հրավիրելու խնդիրը գնում, վորպես նախնական պայման, հետեւ վողական-դեմոկրատական տեղական ինքնավարություններ ստեղծելու համար . . .

Հանքային ինքնավարությունն առ այժմ ձեւվակերպման շրջանումն ե:

Նավթարդյունաբերողների հանձնաժողովի նախագիծը պիտի հաստատվի նավթարդյունաբերողների համագումարում, ապա փոխարքայի

դի վանատան միջոցով մտնի ներքին գործերի մինիստրությունը, հետո Պետական Դուման և այլն:

Այնուամենայնիվ՝ կազմակերպությունը վորոշել ե այժմ և եթ կամպանիա սկսել, ժողովներ հրավիրել նավթահանքերում և գործարաններում՝ նավթարդյունաբերողներին մերկացնելու, իր պատճորմը լայն մասսաների մեջ ժողովը դականացնելու, համաժողովրդական հիմնադիր ժողովի համար ագիտացիա մղելու։ Հենց այս նպատակներով ել նա չի հրաժարվի ինչպես նավթարդյունաբերողների համագումարին^{*)} «մասնակցելուց», այնպես ել Դումայի ամբիոնն ոգտագործելուց՝ մեր ֆրակցիային նախորդք անհրաժեշտ նյութերը մատակարարելով։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Շնորհիվ նավթահանքերում յեղած Բագվին առանձնահատուկ վորոշ պայմանների՝ (հավաքվելու վարոշ հնարավորություն, վոր դեռ լիովին չի վոչնչացված աղմինիստրացիայի կողմից, հանքագործարանային հանձնաժողովների գոյություն) կազմակերպության դրությունը Բագվում ավելի նպաստավոր ե, քան Ռուսաստանի մյուս մասերում։ Բացի դրանից այսպես կոչված լե-

^{*)} Նավթարդյունաբերողների վերջին համագումարի մասին բագվի կոմիտեն լույս ե ընծայել հատուկ թերթիկ։

գալ հնարավորությունների գոյությունն ել թե թեվացնում ե աշխատանքը։ Դրա շնորհիվ կազմակերպության կապերը բավական շատ են։ Բայց կապերն անոգտագործելի են մնում ուժերի ու միջոցների պակասության հետևանքով։

Հարկավոր ե բանավոր և գլխավորապես, տպագրական ագիտացիա թուրքերեն, հայերեւ և ոռւսերեն լեզուներով, բայց միջոցների (և ուժերի) պակասության պատճառով ստիլված ենք սահմանափակել ոռւսերենով, մինչդեռ, որինակ, թուրք բանվորները կարենրագույն դիրք են գըրավում արտադրության մեջ (նավթահանության) և նրանք քանակական հարաբերությամբ համեմատաբար ավելի են, քան ոռւսները կամ հայերը։ Ռուսերեն լեզվով հրատարակվող «Բակինսկի պրոլետարիյ»-ը (Բագվի կոմիտեի որգանը) յերեք ամիս ե արգեն լույս չի տեսնում՝ գլխավորապես միջոցներ չունենալու պատճառով։ Բագվի կոմիտեն իր վերջին նիստում ընդունեց Թիֆլիսի կոմիտեի առաջարկը՝ մի ընդհանուր որգան հրատարակելու մասին՝ ըստ հնարավորության չորս կամ յերեք լեզուներով (ոռւսերեն, թուրքերեն, վրացերեն, հայերեն)։ Մեր կազմակերպության անդամների թիվը (բառիս խիստ իմաստով) 300-ից ավելի չի։ Ընկերներ մենշերիների հետ (մոտ 100 անդամ) միացումը գեռ իրագործման շրջանը չի անցել, — առայժմ միայն ցանկություններ

Են նկատվում, բայց միայն ցանկությունները դեռ լիկվիդացիայի չեն յենթարկում պառակտումը... Պրոպագանդան տարվում ե միայն բարձրագույն խմբակներում, վոր մեզ մոտ կոչվում են «զրույցներ»: Միստեմը դասախոսական է: Մեծ պակասություն ե զգացվում լուրջ պրոպագանդիստական գրականության:

Կուսակցական մասսայի վրա վատ ե ազդում կուսակցությունից կարգած լինելը, Ռուսաստանի կուսակցական կազմակերպությունների գործերին կատարելապես անտեղյակ լինելը: Համառուսական որգանը, կանոնավոր գումարվող համակուսակցական կոնֆերանսներն ու կենտրոնական կոմիտեի անդամների սիստեմատիկ շըրջագայությունները կարող եին գործին ողնել: Բագվի կոմիտեի ընդունած ընդհանուր կազմակերպչական բնույթի վորոշումներից ամենակարեվորներն են յերկուսը.—համակուսակցական կոնֆերանսի մասին*) և համառուսական որգանի մասին: Առաջին հարցի նկատմամբ Բագվի կոմիտեն անհրաժեշտ ե համարում հնարավորին չափ շուտով կոնֆերանս հրավիրել՝ գլխավորապես հասունացած կազմակերպչական հարցերը լուծելու համար: Դրա հետ միասին, Բագվի կո-

*) Բագվի կոմիտեի բանաձեռ համակուսակցական կոնֆերանսի մասին՝ մենք նենց նոր ենք ստացել: Մենք կզտեղնք այդ մեր գնահատականի հետ միասին հետևյալ համարում:

«Սոց. Դեմ»-ի խմբ.

միտեն նույնպես անհրաժեշտ ե համարում բոլշեվիկների կոնֆերանսը՝ վերջին ամիսներս ֆրակցիայի ներսում ստեղծված աննորմալ դրությանը վերջ տալու համար: Այդ հարցի նկատմամբ Բագվի կոմիտեն մատնանշելով կազմակերպությունների միմիանցից անջատված լինելը, և յենթագրելով, վոր միմիայն Ռուսաստանում հրատարակվող ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՈՐԳԱՆԸ կարող կլիներ միացնել կուսակցական կազմակերպությունը, վորպես մի ամբողջություն, կուսակցությանն առաջարկում ե զբաղվել նման թերթի կաղման սկերպությամբ:

Կ. Ա.

3862
3008

26/14



ԸՆԿ. Ի. ԱՏԱԼԻՆԻ ՆԱՄԱԿԸ

Ծնկ. Ստալինի՝ ստորեվ տրված «Նամակ Կովկասից» ը հրատարակվել է 1910 թվի փետրարի 26 (13) ին՝ Ռուս. Սոց. Դեմ. Բանվորական Կուսակցության կենտրոնական որգան «Սոցյալ-Դեմոկրատիկ» № 11-ում։ Նա հանդիսանում եր «Նամակներ Կովկասից» սերիայից մեկը, վորոնի գրվել են ընկ. Ստալինի կռողմից, վոր այն ժամանակ դեկալյարում եր Բազմվի յեվ Ս. Յոհանն կապականական կազմակերպությունները։ «Նամակ» ը տալիս է Բազմվի նավթարդյունաբերության յեվ պրոլետարիատի դրաման ցայտուն, պարզորու անալիզը յեվ միաժամանակ մերկացնում ե նավթարդյունաբերական բուրժուազիայի տակտիկան, վորը ցարիզմի նետ միասին կատաղի հարձակում եր սկսել Բազմվի բանվորների դեմ։ Բազմվի բանվորական շարժման այդ ժամանակաշրջանի սպեցիալիկ պայմանների խորը յեվ մանրամասն վերլուծման նետ միասին՝ «Նամակ» ը պարունակում է նայեվ լոլեսվիկյան կազմակերպության լիակատար ու ցայտուն բնու-

թագրությունը։ Նամակն ունի հսկայական նամակուսակցական յեվ միշագգային նշանակություն։

Նամակն արտապվում է «Սոցյալ-Դեմոկրատ» թերթից՝ առանց վորեվե փոփոխության։

ՍԴՐԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻՒՆ ԿԻՑ

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿՈՒՍՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ:

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ „ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ“-Ի ԱՌԹԻՎ

(«Բակինսկի Բարոյի»-ի թերքի 1933 թ. ապրիլի 9-ի
առաջնորդողը)

Ընկ. Ստալինի այսոր հրատարակվող նամակը ներկայացնում է «Նամակներ կովկասից» սերիաներից մեկը, գրված 1909 թվի դեկտեմբերին (ին տոմարով) ընկ. Ստալինի կողմից «Պողետար» ի համար (բոլցիկների որդան, վոր լույս եր տեսնում 1908.09 թվերին):

Այդ ժամանակ ընկ. Ստալինը գտնվելով պողպոլիսում, Սոլ-վիչեգորսկի աքսորից փախչելուց հետո՝ դեկավարում եր Բագվի և Անդրկովկասի կուսակազմակերպությունը:

Թիֆլիսի պահնորդական (ախրանկայի) բաժանմունքը 1909 թվի սեպտեմբերի 12-ին հաղորդում ե.՝ «Հայտնի սոցիալ-դեմոկրատական գործիչ բոլցիկ կորան („Սոսո“) յեկել ե Թիֆլիս և սկսել իր աշխատանքը կուսակցության շարքերում։ Սակայն այդ ժամանակ ընկ. Ստալինի աշխատանքի գլխավոր վայրը Բագուն եր։

Բնորոշ մատնանշել, վոր վոստիկանությունը 1911 թվի հոկտեմբերի 11 ին ընկ. Ստալինին

ձերբակալելու ժամանակ՝ առանձնապես մատնանշում ե նրան հետամուտ լինելու դժվարությունը, նրա ճարպիկությամբ խուսափելը գործակալների ձեռքից, ինչպես և նրա ղեկավար գերը Անդրկովկասյան կազմակերպությունում։

Ընկ. Ստալինի նամակը «Պողետար»-ը տպագրել չեր կարողացել, վորովհետև գրակցիան, կենտրոնները վոչնչացնելու կենտրոնի 1910 թ. հունվարյան պլենումի կայացրած վորոշման համաձայն՝ բոլցեկիները դադարեցրել եյին իրանց առանձին որդանի հրատարակությունը, ուստի և նամակը տպագրվել եր «Սոցիալ-Դեմոկրատ» ում։

Այդ նամակը սերտ կապակցությամբ պետք ե ուսումնասիրել ընկ. Ստալինի այն «Նամակ կովկասից»-ի հետ, վոր տպագրվել եր № 2 դիսկուլկասից սիոն թերթում «Սոցիալ-Դեմոկրատ»-ի հավելված, 1910 թվի հունիսի 7 ին (մայիսի 24-ին) և նըւիրված ե Թիֆլիսի կազմակերպության աշխատանքին ու հանձին նոյ ժորդանիայի՝ լիկվդատորության մերկացման։

Ընկ. Ստալինի Բագվից գրած նամակը բաժանվում ե յերեք մասի և նվիրված ե՝ 1. նավթարդյունաբերության դրությանը. 2. նավթահանքային ինքնավարության և 3. կուսկազմակերպության դրությանը։

Ընկ. Ստալինը հրաշալի վերլուծում ե տալիս այն ժամանակա Բագվի նավթարդյունաբերությանը այս այն ժամանակա Բագվի նավթարդյունաբե-

բության մասին՝ վորից յելնելով՝ Բագվի կոմիտեն
ամբողջ նավթային պրոլետարիատի համախմբ-
ման համար պայքար մղելու պարզորոշ գիծն
եր նշում։ Մասսաների համախմբումը կուսակ-
ցության շուրջը պետք ե ընթանար՝ հանքային
հանձնաժողովների — բանվորական մասսայական
արդ կազմակերպությունների բոլշևիկյան ամրա-
պշնդման ուղիով։ Բագվի կոմիտեն մասսաները
մորիկազգիայի յե յենթարկել պայքարի համար՝
նախապատրաստական աշխատանք տանելով ընդ-
հանուր գործադուլի համար, վորը պետք ե ամ-
րապնդեր պայքարող բանվորների միությունն
ու դասակարգային համերաշխությունը, դրանց
հակագրելով նավթային արքաների ու ցարական
ադմինիստրացիայի ձուլված, միացիալ ուժերին։

1908 09 թվերի «փեշեշային» անհաջող գոր-
ծադուլների մեծ մասի փորձը՝ հրահրել ե բան-
վորներին մասնակի, անջատված ցույցերից,
նազրաղներ տալու լողունզի անվան տակ՝ անց-
նելու դեպի Բագվի ընդհանուր գործադուլը,
հենց դրանով ել առանձին ֆիրմաներում գոր-
ծադուլ անելու տակտիկայից՝ անցնելու դեպի
ընդհանուր գործադուլը։

Բագվում կապիտալիստական հարձակումը
հեշտանում եր մի շարք պատճառներով։ Նախ
այստեղ իր ազգեցությունն եր ցույց տալիս
ամբողջ Ռուսաստանում հականեղագիտության

հարձակումը և ստալիպինյան հունիս Յ-յան ռեժի-
մի հաստատումը։ Յերկրորդը, մեծ զեր ե խաղացել
ցարական ազմինիստրացիայի լակեյական կամա-
կատարությունը՝ ժանդարմ Մարտինովի գլխա-
վորությամբ, վոր գործում եր նավթային արքա-
ների հաշվին ապրող «ղոչիների» բանդիտական
կատարությունի հետ ձեռք-ձեռքի տված։ Յ-րդը ար-
տահայտվում եր բանվորների համեմատաբար
թույլ կազմակերպվածությունը, վոր պայմանա-
վորված եր նավթահանքային մասսաների վոչ
մշտական կազմով, վորի նշանավոր մասը հոսում
եր գյուղից։ Չորրորդը, մեծ զեր եյին խաղում
աշխատավարձի առանձնահատուկ ձեռքը, նրա
բաժանումն «իսկական» աշխառավարձի և նագ-
րադնոյի, բնակարանային, բաղնիսի վճարը և
այլն, վոր զանազան պատրվակներով հեշտացնում
եր աշխատավարձի կրճատումը։

Իգուր չե, վոր Ռուդվիլի հավատարիմ շուն—
կառավարիչ Բարսկին նազրադնոյի վճարումը
պահանջող բանվորներին քշելով ասել եր. —
«Դուրս կորեք, գործադուլ արեք, յեթե ուզում
եք։ Ֆիրման ձեզ սուբսիդիաներ ե նվիրել և նա
հետ կվերցնի ձեզնից, յերբ վոր ուզենա։» Բա-
վական ե բերել մի քանի որինակներ համոզվելու
համար, թե ինչպիսի զարհութելի հականեղագո-
խական աերքոր ե յեղել սահմանված Բագվի բան-
վորների հանդեպ։ «Բագվի ընկ.» Բալախանու

գլխավոր գրասենյակի կառավարիչը բանվորների կողմից արված պահանջին—բնակարանային վը-ճարը տալու մասին՝ լկտիորեն պատասխանել ե. «Յես վարձում եմ բանվորներին և վոչ թե նը-րանց կանանց»։ Միրզոյեմի իր հանքային հանրա-կացարաններն իսկական բանտ եր դարձել, վորտեղ չեյին թույլատրում բանվորների մոտ գալ մինչև իսկ հարազատներին, իսկ բնակարա-նային վճար չտալու նպատակով՝ նա արդել լ ե բանվորներին ամուսնանալու առանց իր թույլտը-վության։ Ծեծն ու սպանությունները սովորա-կան յերեսույթներ եյին դարձել։

Դաժան ռեակցիայի այդ տարիներին բոլշե-վիկների Բագվի կազմակերպությունն ընկ. Ստա-լինի ղեկավարությամբ կարողացել ե մոբիլիզա-ցիալի յենթարկել, պայքարի հանել բանվոր դա-սակարգը։ 1909 թվի մայիսեկյան քաղաքական գործադրությունը, վորի ժամանակ հանքերում գոր-ծադրույ եյին արել 2537 բանվոր, արդեն բան-վորների անձնազոհ պատրաստականության ցայ-տուն ապացույցն եր հանդիսանում՝ բոլշեկյան կուսակցության դրոշի տակ պայքարելու համար։

1909 թվականը յերկարատև արդյունաբերա-կան անկման վերջանալու և արդյունաբերական վերելքի, ճիշտ ե ժամանակավոր վերելքի տարի եր Ռուսաստանում, մանավանդ Բագվի նավթար-դյունաբերության մեջ։ Այդ ժամանակավոր աշ-

խուժացումը նպաստում եր նավթարդյունաբե-րողների «գործերի գրաստվելուն»։ Բայց դա նաև հիմք հանդիսացավ բանվոր դասակարգի համար պաշտպանվելուց, բուրժուազիայի վրա հականար-ձակման անցնելու հաջողության համար։

«Բակինսկի Պրոլետարիյ» բոլշեկյան թեր-թը (1909 թվի ոգոստոսին) բոլորովին ճիշտ կերպով գրել ե, վոր բանվորները կշահեն այդ արդյունաբերական, թեկուզ և ժամանակավոր, վերելքից։ «Բանվորները հնարավորություն կըս-տանան հանգստանալու և հավաքելու իրենց ու-ժերը։ Ոգտվելով բարեհաջող պայմաններից՝ նը-րանք տնտեսական գործադրույներ կմկնեն և գը-րանց ընթացքում կուժեղացնեն իրենց լեգալ և անլեգալ կազմակերպությունները, ավելի սեր-տորեն կհամախմբվեն նրանց շուրջը։ Այդ բոլո-րը նրանց հնարավորություն կտա գործնակա-նում նախապատրաստվելու ապագա հեղափոխա-կան հարձակման համար»։

Ըսկ. Ստալինի նամակը հանճարեղ պարզու-թյամբ յերեան ե հանում նավթարդյունաբերու-թյան զարգացման առանձնահատկությունները ռեակցիայի տարիներում, և տալիս ե մեզ լենին-յան ստրատեգիայի և տակտիկայի կիուրման փայլուն որինակը դասակարգային պայքարում՝ բազմազգի Բագվի դժվարագույն պայմաններում։

Նամակի՝ հանքային ինքնավարությանը վերաբերվող մասը ցույց եւ տալիս «զեմսկի ռեփորմի» դասակարգային եյությունը, վոր կառավարությունը ծրագրել եր կիրառելու հագում՝ նավթային աշխարհի խոշորագույն ինքնակարների շահերի համար։ Նախագիծը 23 խոշոր նավթարդյունաբերողներին ինքնավարության մեջ չորս անգամ ավելի իրավունք եւ տալիս, քան հանքային ռայոնի հարյուր հազար բանվոր բընակչությանը։ Դրա հետ միասին ընկ. Ստալինի նամակը ցույց եւ տալիս, թե ինչպես ռեակցիայի պայմաններում պիտի ոգտագործել լեզարնարավորությունները։

Հաշվի առնելով, վոր հանքային ինքնավարությունը պետք եւ աջակցեր բաժան. բաժան յեղած նավթարդյունաբերողներին մի միասնական ջոկատ կազմելու, վորը պիտի ցուցադրեր իր ընդհանուր պահանջներն իր ներկայացուցիչների միջոցով, Բագվի Կոմիտեն վորոշեց ոգտագործել նախագծող ինքնավարությունը «նրա մեջ մասնակցելու նպատակով բանվորների ընդհանուր տնտեսական կարիքների համար ագիտացիա անելու և բանվորներին ուժեղ կերպով կազմակերպելու համար»։ Բագվի բոլցեկները պետք եւ ոգտագործեյին «զեմսկի կամպանիան» բանվոր դասակարգի միասնություն ստեղծելու համար, ընդգծելով ցարիքմի տապալման և սահմանադիր

ժողովի հրավիրման անհրաժեշտությունը։ Հանքային ինքնավարության հարցի շուրջը՝ Բագվի բոլցեկների տարած պայքարը ավելի քան մեծ նշանակություն ուներ ամբողջ կուսակցության համար, վորովհետեւ նա տեղի ուներ այնպիսի մի ժամանակաշրջանում, յերբ տեղի ուներ մի կողմից՝ ոտղովիստների, ուլտիմատիստների ֆըրակցիոն պառակտիչ աշխատանքը, վորոնք ժըխտում եյին լեզալ հնարավորությունների ոգտագործման անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ լիկիդդատորների աշխատանքը։

Այն, ինչ գրված եւ ընկ. Ստալինի «Նամակ Կովկասից»-ում Բագվի հանքային ինքնավարության մասին՝ մի քանի եջերում սպառում եւ մինչև վերջ այդ հարցն արտասովոր պարզությամբ, մինչդեռ մենշևիկներն այդ հարցի առթիվ գրել եյին մի մեծ, բայց դատարկ գիրք։

Ընկ. Ստալինի նամակի վերջին մասը նվիրված եւ Բագվի կուսակազմակերպության դրությանը։ Վարպետորեն կիրառելով գիլեկտիկան մեթոդն՝ ընկ. Ստալինը բացահայտում է Բագվի յուրահատուկ պայմանները ռեակցիայի տարիներում, վորը կայանում եր հավաքվելու վորոշ հնարավորության մեջ՝ հանքագործարանային հանձնաժողովների, յեղած լեզալ հնարավորությունների գոյության մեջ։ Ընկ. Ստալինը զրում ե. «Դրա չնորհիվ կազմակերպությունը

բավականին շատ կապեր ունի, բայց այդ կապերը չեն ոգտագործվում ուժերի և միջոցների պահառաթյան հետևանքով»:

Ընկ. Ստալինը Բագվի բոլշևիկներին տալիս ե գործողությունների պարզորոշ ծրագիր, մատնանշելով, վոր անհրաժեշտ ե՝ անհապաղ ծավալել բանավոր և զրավոր ագիտացիա, առանձնապես թուլքերեն և հայերեն լեզուներով, հրատարակել Համասնդրկովկասյան որգան Յ. Լեզվով և կարգավորել լուրջ պրոպագանդիստական աշխատանքը։ Բոլշևիկների Բագվի կազմակերպությունը 1909 թվին իրենից ներկայացնում եր թվով փոքր, բայց գաղափարապես բավականին ուժեղ բոլշևիկյան մի կազմակերպություն, վոր կանգնած եր բոլշևիզմի դիրքերում և շարունակում եր մնալ մենշևիկների հետ չմիացած մի կազմակերպություն։ Բագվի Կոմիտեյի բանաձեռ, վորի մասին խոսում ե ընկ. Ստալինը իր նամակում, ապացուցում ե շոշափելի կերպով ընդհանուր կուսակցական հարցերում Բագվի բոլշևիկյան կազմակերպության քաղաքական գծի ճշությունը։

«Բակինսկի Պրոլետարիյ»-ի № 7-ի խմբագրական հոդվածը խոսում ե Բագվի բոլշևիկների վերաբերմունքի մասին՝ «Պրոլետարիյ»-ի ընդլայնած խմբագրության բանաձեռի և ներկուսակցական տարածաշնությունների նկատմամբ, մաս-

նավորապես ոտզովիզմի, ուլտիմատիզմի և աստվածաշինության նկատմամբ։ «Բագվի Կոմիտեն գտնում ե, վոր խմբագրության փոքրամասն ության (այսինքն Մաքսիմովի և կամպանիայի) տեսակետը չի համապատասխանում կուսակցության և պրոլետարիատի շահերին և դրա համար վճռականորեն արտահայտվում ե հոգուտ խմբագրության մեծամասնության բռնած դիրքի»։

Այդ հոդվածը ցույց ե տալիս վոր Բագվի բոլշևիկները Բագվի Կոմիտեյի գլխավորությամբ պաշտպանել են լենինյան տեսակետը՝ պայքարելով վոչ միայն մենշևիզմի և լիկվիդատորության դեմ, այլև այն հոսանքների դեմ, վորոնց ներկայացուցիչներն ելին Ա. Բոդգանովը (Մաքսիմովը) և ուրիշները։

Պակաս բնորոշ չի Բագվի բոլշևիկների պայքարը հանուն բանվորների ինտերնացիոնալ միանության։ Բագվի Կոմիտեյի 1909 թվի թուուցիկներում կարգում ենք. «մեզ մոտ Բագվում ամեն ինչ ամենաայլանդակ և հրեշտակորձեր ե ընդունում։ Կարծես հանկարծ հողից դուրս յեկ ած գիշատիչ նավթարդյունաբերական կազմական, վորպես թե մի կախարդական գավազանի շարժումով բերել ե Կովկասի զանազան անկյուններից քաղցած, տկլոր մասսաներ, վորոնք իրենց ընդհանուր աշխատանքով պետք ե

հարյուր միլիոններ վաստակելին իրենց շահագործողների համար»։ Լեզուների, ազգությունների, կրոնների տարբերությունը—այդ բոլորը մեծ արգելք են հանդիսացել բանվորների անհրաժեշտ համախմբման և համերաշխության գործում։ Բայց կյանքը կատարել ե իր գործը. նավթարդյունաբերական կապիտալի դեմ՝ մղած պայքարն արագությամբ համախմբել ե զանազան ազգությունների բանվորներին և միացըրել նրանց մի ամբողջության մեջ։

Պայքարելով մենշևիկների, եսերների, դաշնակների և թուրք նացիոնալիստների բանվորների վրա ունեցած ազգեցության դեմ՝ Բագվի Կոմիտեն դնում և գործնականորեն իրականացնում եր բազմազգի պրոլետարիատի համախմբման խնդիրները՝ սոցիալիզմի համար տարվող հետեղական պրոլետարական պայքարի ուղիով։ Առանձնապես բարդ ե յեղել այդ խնդիրն աղգային թշնամության պայմաններում, թշնամություն, վորը բորբոքում եին բուրժուազիան ու կառավարությունը 1905 թվի հեղափոխությունից հետո։ Բագվի Կոմիտեյի այդ նույն թուոցիկն ասում եր՝ «Ազգային հարցը, ազգային անտոգոնիզմը գոյություն ե ունենալու այնքան ժամանակ, վորքան գոյություն ունի բուրժուազիան»։ Միայն մասնավոր սեփականության, շահագործ-

ման և դասակարգային տիրապետության կործանումն ե, վոր կարող ե վերջ դնել բոլոր տեսակի ճնշումներին և դրանց թվում՝ ազգային ճնշմանը»։ Ուեակցիայի տարիներում Բագվի կազմակերպության առաջ կանգնած բոլոր դժվարությունների լուծման խնդրում՝ վճռական դեր ե խաղացել ընկ. Ստալինը։

Ընկ. Ստալինի նամակը միջազգային ահագին նշանակություն ունի։ Լենինի աշխատությունների և ընկ. Ստալինի մյուս հոդվածների հետ միասին յեղբայրական կոմկուսակցությունները պետք ե ուշադրությամբ ուսումնասիրեն այդ նամակը, վորպես մարքսիստական դիալեկտիկայի կիրառման փայլուն որինակ, բանվոր դասակարգը նվաճելու համար մզվող պայքարում։ Բագվի և Աղրբեջանի կազմակերպության համար «Նամակ Կովկասից»-ը, նավթի և բամբակի պանների կատարման և գերակատարման, գարնանացանի բոլշևիկյան անցկացման համար մզվող պայքարի դրոշն ու ծրագիրը պիտի դառնա։ Իր հերոսական անցյալում ունենալով սոցիալիզմի համար մղած իսկական լենինյան պայքարի լավագույն որինակներ՝ Բագվի և Աղրբեջանի կազմակերպությունները պետք ե տասնապատկեն իրենց ուժերը և գործով ցույց տան իրենց՝ վորպես

արժանի շարունակողներ այն մեծ պայքարի,
վորը տարել ե Բագվում ցարական ռեակցիայի
ամենածանր տարիներում կուսակցության և
համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ
Ստալինը:



ՀԱՅՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

50 ԿՈՊ.

53



I. STALIN

QAFQASJADAN MƏKTUB

Azernəşr — Bakı — 1933

ՀՀ Ազգային գրադարան



NL0179049

